

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Նոր Արտագերս համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ

Հայտատու՝ Նոր Արտագերսի համայնքապետարան

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերսի գյուղապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ հետևյալ

համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերսի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1)

Կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է

Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը, ապահովում է Աշխատակազմի

գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը. Համայնքի

ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա

ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը,

համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ և այլ իրավական

ակտերով անձնակազմի կառավարման հետ կապված գործառնությունների

իրականացումը: Օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է Համայնքի

զինապարտների գրանցամատյանը, սահմանված դեպքերում և կարգով

մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների

կազմակերպման աշխատանքներին, իրականացնում է պաշտոնի անձնագրով

սահմանված այլ իազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է.

Բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար

պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց

համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն

երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության

ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի

դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության

ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի

դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության

դասային աստիճան (կոչում) կամ վերջին չորս տարվա ընթացքում

քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում

առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա

ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության

առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք

տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ

տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային

ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ,

«Նորմատիվային իրավական ակտերի մասին», «Զինապարտության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության

կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի «Նախագորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման կարգը հաստատելու մասին» N282 որոշման, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն. Անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2019 թվականի նոյեմբերի 28-ին, ժամը 13.00-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերսի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նոր Արտագերս 1-ին փողոց 21 շ.): Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
. դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,

. տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
. արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
. մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

. անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը կարող են հանձնել Արմավիրի մարզի Նոր Արտագերսի գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի ոչ աշխատանքային օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2019 թվականի նոյեմբերի 13-ը, մինչև ժամը 18.00-ը: Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Նոր Արտագերսի գյուղապետարանի աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նոր Արտագերս 1 փ. 21 շ., հեռ.՝ 098-31-20-24) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71.):

Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Նոր Արտագերս, 1 փ. 21 շենք
Հեռ.՝ +374 98 312024